



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format


**Adapt** — remix, transform, and build upon the material

Junyso queper  
apropiada de la

910.4(47.925)

n-81

1904









10 .06. 2013


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊՐԵՍՆԱԿԱՆԱԿՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՄԱՍԻՆԻՍԻՆԻ ԿՈՒՆԻՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ

ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՐԱԿՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ  
ՄԱՍԻՆԻՍԻՆԻ ԿՈՒՆԻՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ  
ՄԱՍԻՆԻՍԻՆԻ ԿՈՒՆԻՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ



ՄԱՍԻՆԻՍԻՆԻ ԿՈՒՆԻՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ  
ՄԱՍԻՆԻՍԻՆԻ ԿՈՒՆԻՍՏԱՆԻ ԿԵՆՏՐՈՆ



Մ Ր Տ Ա Ջ Օ Ն

Վ Ս Շ Մ Ա Շ ՈՒ Ք

**ՅԱԿՈՐ ԷՖ. ՇԱՀԻՆԵԱՆԻ**

Յ Ի Շ Ա Տ Ա Կ Ի Ն

ՀԵՂԻՆԱԿԵՆ



20722

# ԵՐԿՈՒ ԽՕՍԻ



սիկա ուխտագնացութեան առիթով  
 գրուած յօղուածներու շարք մըն  
 է, հրատարակուած «Սուրհանդակ»ի  
 մէջ, որուն Պատ. Խմբագրութիւնը՝  
 բարեհաճեցաւ հրատարակել ինծի  
 ուղղելու քանի մը բաշխեալեաց տողեր, որոնցմով,  
 ահա՛, կը համարձակիմ «Պատկերներ»ուս կուրծքը  
 զարդարել:

« Ընթերցողներու մասնաւոր ուշադրութեանը կը  
 « յանձնենք յետագայ գրութիւնը, երրորդը եւ վերջինը  
 « Սըվազի մեր Թղթակից-աշխատակից Մ. Իսպիրեան  
 « էֆ.ի սիրուն «Պատկերներ»ուն: Ասոնց առաջինը  
 « բաւական առաջ հրատարակուեցաւ. երկրորդն  
 « ալ որ դեռ անցեալ շաբթու երեւցաւ «Սուրհան-  
 « դակ»ի մէջ, կը նկարագրէր զիւղական բարբեր  
 « ու տեսարաններ, եւ կը յուզէր ընկերային շատ  
 « կարեւոր եւ կնճռոտ խնդիր մը՝ զիւղական ընտա-  
 « նեկան բարբերու ինկածութիւնը: Այս երրորդ  
 « գրութիւնն ալ նոյնքան — եւ աւելի ա՛լ — շա-  
 « հագրգուական է, ո՛չ միայն անոր համար որ իր  
 « գծած պատկերները հոգեկան անուշ բան մը ու-  
 « նին իրենց մէջ, կամ անոր համար որ Վարդա-  
 « վառի Տօնախմբութիւնը կը նկարագրուի զիւղա-

ԵՐԿՈՒ ԽՕՍԻ  
 ԵՐԿՈՒ ԽՕՍԻ  
 ԵՐԿՈՒ ԽՕՍԻ

45349-64



« կան վանքի մը մէջ ու շուրջը, այլ եւ անոր հա-  
 « մար որ իր դիտող աչքերով ու հետախուզող մտքով  
 « մեր աշխատակիցը կըցած է բանասիրական տե-  
 « սակէտով ալ շատ կարեւոր ընծայել զայն, ժողո-  
 « վրդային կարգ մը հաւատալիքներու եւ քրիստո-  
 « նէական զանազան տօնակատարութիւններու ,  
 « ինչպէս նաեւ վանքերու եւ դաշտերու մէջ ցըր-  
 « ուած աւանդութիւններու, լուսադրօններու, խաչ-  
 « քարերու, եւլն. մէջ ցուցնելով հետքերը մեր հին  
 « հաւատքին » :

1904 Մարտ 1  
 ՍԸՎԱԶ

*Վ. Գ. Կ. Կ.*



# ԽՈՒՅԷՍ ԳՈՒՐՍ

## ՊԱՏԿԵՐՆԵՐ

Ա.



ալ ու մաշ մարմի-  
 նիս ազդու կազդոյր  
 մը տալու համար, աշխա-  
 տանքի խուցս պահիկ մը թո-  
 դուլ կ'որոշեմ: Ու կը սպասեմ  
 որ կրակոտ արեւը՝ իր ասղնտող շո-  
 դերը ժողվէ: Արդէն, սա՛ վարդոտ ու-  
 բերուն, գիշերուան ճամբորդութիւնը՝  
 գինով հողիներու հմայքոտ երա՛զը,  
 չըլլա՞ր: Ետինք է հիմայ: Համով հոմ-  
 բոյր մը Արշալոյսիս թերխաշ այտելէն,  
 ու կառքին մէջն եմ:

Անիւները կը թաւալին ալիւրոտ



ճամբու մը ճերմակ կուրծքին վրայ, որուն երկու դին, մաքուր մարգերուն ծոցը, կանաչորակ թաւիչ մը կը փռուի: Ու նիհար ծառերուն գիրկէն, ուր տենդոտ տերեւները կը հեւան, գիրք գեփիւռին մեղմիկ գգուանգը՝ անուշ զովութիւն մը կը բերէ հուրքո՞տ ճակտիս: Աշխէտ ճիերու անզուսպ զոյգը առջեւիս յստակ գետակը կը կոխկռտէ, որուն կահուղիկ սիրտը՝ սպիտակ կ'արիւնի՝ Դէմն ենք հիմա: Ներքին զգացումէ մը մղուած, ետիս կը դառնամ: Անկիւնի մը մկրատին միջեւ, ա՛յ կը հալի՞ քաղաքը, որուն մորջ նոճիները՝ վճիտ ճիւտերնին կը ճօճեն, ջինջ միջոցին մէջ:

Տափարակ դաշտերու մէջ կը մխրճինք, ուր կամչոտ հովերու յուզուն հոսանքին առջեւ, ծալ ծալ կը ծփայ գանգրագեղ ցորեններու լայն փռուածքը, ուրկէ, երգը կտուցնուն ծայրը, երբեմն, զուարթ արտոյաններ ու կլորիկ լրբիներ կը ցատկեն, թերեւս տեղ փոխելու համար: Մինիների թիթեռնիկներն իրենց ծաղկէ պատմուճանը, ու մեզրոտ մեղուններն իրենց ոսկի զրահը կը շողացնեն տաքուկ արեւին ճանաչներուն տակ, տա՛ դաշտերուն մէջ, որոնց գորշորակ պատառին վրայ, նարմնազան ծաղիկներ գինեւէտ բաժակներն կը շարժեն, ու բիւրազան խոտեր՝ հիւթեղ

թերթերնին կը թրթռացնեն, վառվռուն թոյրերու և խունկոտ բոյրերու հեշտ խըղճանքէն արբշի՞ն, մետաքսէ անուրջի՞ մը մէջ. անուշիկ մրափ մը կ'առնեմ, ուր ճրուռողելով գիրկս կը նետուի Արշա՞ս:

Ու ... կառապանիս մեղմ ձայնը կ'արթընցնէ իս:

Կառքը կեցած է աղուոր աղբիւրի մը քովիկը, ուր իր զով հովանին կը պտըտցնէ վարսագեղ ծառ մը, որուն հաւքաշին չոր ոստերուն մէջտեղ, տարաշխարհիկ արագիւր բոյն դրած է, ուրկէ, ահա՛, իր լայն թեւերուն աղտոտ ճերմակը պարզած, ու վտիտ սրունքներուն կարմիր կարկինը զսպանակած բաղաճայն կալիկալի մը կը նետէ օդին մէջ: Աղբիւրին գէմը, ճամբէն դուրս, մօրուքնին տնկած սայլերու կլոր շուքերուն տակ, գետինը ինկած կը խուկան գեղջուկ լաճեր, որոնց արթուն հասուկ ընկերները մածուն կը տորբեն, Կաղանկայտուացիին պատմածին նմանող, փայտէ խոշոր ամաններու մէջ, ուր կը լեցնեն փշրուած շորերու գէզը, ու ժողվուելով՝ կը դգալեն անանկ աշխուժով ու ախորժակով, որ ... երթալ մասնակցի՞լք կուգայ, Կ'աւտեն կուշտ ու կուռ, ու գուլալ ջուրը կը խմեն կո՛ւլտ կո՛ւլտ: Երնէ՛կ իրենց, Ե՛ս ալ, ասդին, գորգի մը վրայ փռուկ, կռնակս ծառին տուած կը



ճաշեմկառապանիս հետ, ու...երկու գաւաթ  
գօնեակ կ'առնեմ, ախորժակս սրելու համար:

Նորէն ճամբայ կ'ելլենք: Աս հեղ, Ալիսի  
ափափայ ափերը կը քերենք, որոնց վարօքը  
ծանձաղուտին մէջ խրած ջրի փայտեր կ'ա-  
րեւոտին, յորդումի մը սպասուածին մէջ յոգ-  
նած: Երբեմնի փղձկած Ալիսը չէ ասի: Եր-  
կու կողմերը, լայնածաւալ դաշտերու գորշ  
գետինը կը կէտկիտեն դեղափունջ ծառերով  
չըջանակուած շարք մը գեղեր, որոնք Թէ-  
ճէրի յազթ շրթային պրկուածին մէջ, լայն  
մը կը պառկին: Կ'անցնինք հոյակապ կա-  
մուրջէ մը, որուն վրայէն դարեր անցեր ու  
հնութեան կնիքը դրոշմեր են: Բլուրներու  
ստուար ստուերները հովանոց բռնած՝ կ'ա-  
ռաջանանք: Դեղնած արեւն իր ոսկի փոշինե-  
րով կը լուայ հեռուի լերկ լեռներուն առլեփ  
ալիքները, որոնք, անուշ մշուշի մը մէջէն,  
կը տփգունին, և որոնց վերեւ, մրրկաբեր  
ամպերն ալ կը ստեղծեն ահագին լեռնա-  
նման կոհակներ, կապոյտ անուրջի մը կա-  
պուտորակ գոյներովը ներկուն:

Բլուրէ մը վեր կը շուլլուինք: Բերնիս  
անկիւնը կը մխայ սիկառս, որուն բրգածեւ  
գորշ ծուխերուն հետ, երեւակայութիւնս  
կը ճախրէ հո'ն, ուր մինինիկ կենդանի-  
ներ կը թրթուան, կը բզզան, կը շաղակ-  
լատեն. հո'ն, ուր այծերը ծոթորը կը ճա-

րակեն ու գառները՝ թրթնջո՛ւկը. հո'ն, ուր  
թռչնիկները կը ճռուո՛ղեն, կը գեղգե՛ղեն,  
կը դայլայլեն. հո'ն, ուր մատաղ հօտաղ-  
ները՝ իրենց սիրուն սրինդներուն սուր սար-  
սուռները կը սաւառնեցնեն սարէ սար. հո'ն  
ուր ծաղիկները՝ իրենց հալուէին շնորհը,  
հեղիքերը՝ իրենց թոյրերուն փայլը, հովերը՝  
իրենց սիւգերուն անուշութիւնը, աղբիւր-  
ները՝ իրենց ջուրերուն զովութիւնը, արևը  
իւր շողերուն ճաճանչումը, ու հողերը՝ իրենց  
կուրծքի մեղրոտ կա՛թը կը նուիրեն, առ-  
անց փոխարէն բան մը պահանջելու: Աս  
մտրակուած մտածումներուն պլլուած, Եսիս  
մուսացումին մէջ, երանոտ ըոպէներու յա-  
ւիտենութիւնը կը վայելեմ կուշտ մը:





բ.



առքիս զոյգ մը աշխոյժ աշխատ ձիերը՝ շունչ կ'առնեն սարահարթին վրայ, ուր տեսքոտ նոր տեսարան մը՝ իր թովա՛նքը կը պտըտցնէ եռ ու եփ երակներուս մէջ, Հըսկայ վարդէ վերջալոյս մը՝ իր բիւր թերթերուն մելանուչ կարմրութիւնը կը կաթեցնէ եւ կակաշի գոյներով ամպերու ժապաւէններ կ'երկարին օդին մէջ, Լոյս ու ստուեր կը գրկուի՛ն: Բնութեան յաւերժահարսը՝ տիեզերական առագա՛ստը կը մտնէ: Հիացումի մէջ թաթխուած, վայրիկ մը կ'ըմբռնանեմ՝ առ մարմնացած վսեմը, զոր՝ ամենազօր վրձինովը կը գեղերփնէ Իսեա՛լ արքիսթը ... : Ծուրջիս ձայները կը մեռնին: Բոյսերու խոսուըստո՛ւքը կը սկսի: Աղջամուղը ողողած է ամէն բան: Սեւ Անհունը կը քնանայ գիշերուան սե՛ւ համրոյրին տակ:

45349-64

Տա՛ խաժագեղ անբաւութեան մէջէն, արծաթ ծիծաղներ կը մաղուին վար, որոնք կը գինովցնեն՝ իս: Ու հոգիս, ուժգին սլացքով մը, կը սաւառնի սարերու վրայէն, ամպերէն անդին, մթնոլորտէն վե՛ր, երազներ՝ ծծելու անհունութեան ճակտի աղամանդէ զարդերէն, անուրջ լուսնկայէն՝ որ տիեզերքի հառաչներուն փրփո՛ւրն է, փաղփուն ծիրկաթինէն՝ որ մանկութեան մը անհետացած երազներու հե՛տքն է, ծաւի կապոյտէն՝ որ թափանցուած գաղտնիքին վարագո՛յրն է ... : Հոգիս, առ աղամանդելոյդ լոյսերը կուշտ մը ըմպելէ ետքը, կ'իջնէ վար գիշերուան գիւղը, պատրանքներուն պատանքի՛ն մէջ:

Ձիերուն խրխնչիւնը լուրթիւնը կը խղէ: Վար կ'իջնեմ: Ճամբան կ'երկճղի: Մէկը Տուզլան կը տանի, միւսը՝ Տուզասար: Աս վերջինին կ'ուղղուինք: Ծանօթ դերբուկ կիրճէ մը դարվար պիտի իջնենք: Կառապանս առջեւէն կ'առաջանայ: Ու ես, լուսընկային մետաքսէ շղարշի մը փրփուրներէն մաղուող նուաղուն ցոլքերէն գոյացած ստուերիս հետ, կը քարեմ կառքին ետեւէն: Քառորդ մը կը տեւէ վայրէջքը: Կառքը կը նետուիմ: Ու դարձեալ, խոկուններուս մետաքսէ ցանցի՛ն մէջն եմ: Հիմակ ալ միտքս կ'որոճայ Լոյսի ու Ստուերի խրտեցուցի՛չ






խնդիրը: Երբ առջեւ կը ցցուին բնութեան հակապատկերները՝ լուսագեղ ցորեկն ու սեւահեր գիշերը, վարդոտ ամառն ու ձիւնոտ ձմեռը, գարնայնի թերխշուկ աւօտներն ու աշնայնի նուաղուն իրիկունները, բնական զուգորդութեամբ, կը ներկայանան նաեւ կեանքի հակասութիւնները՝ երջանկութիւնն ու թշուառութիւն, հարստութիւնն ու աղքատութիւն, առողջութիւնն ու հիւանդութիւն, որոնց զանազան սպաւորութիւնները, ճառագայթներու և ամպերու պէս, մեր հոգիի վրայէն անցնելով, կը սորվեցնեն երանութեան պատրո՞ղ հրապոյրը, ու թըշուառութեան դժնէ՛ ճաշակը, ուրախութեան պաշտամունքը՝ որ կեանքի տա՛րն է, ու տառապանքի կրօնքը՝ որ դարձա՛նն է մահուան դէմ, ինչպէս կը հրաշագրէ Կասթօն Տէչան: Լոյսի ու ստուերի մեղանուշ խառնուրդը, զոր, այսօր, հանգիստ մը վայելեցի, պերճօրէն կը հայլիացնէ տիեզերական ներդաշնակութեան ու համերաշխութեան խորո՞ւնկ հաւատքը: Կեա՛նքն ալ արցունքի՛ ու ժպիտի՛ բաղադրութիւնը չէ՞ արդէն ...:

Աս մտածումներուն հետ, կ'առաջանամ ձորի մը դարձդարձիկ շաւիղներէն, որոնց վերջակէտն է Տուգասար: Կծու հտտեր մը կը կճեն ունդերս: Սիկար մը կը կրակեմ:

Մութին մէջ կա՛յծն անգամ հրապուրիչ բան մը ունի: Ահա՛ գեղէն ալ պճլտուն լոյսեր աչքերնին կը քթթեն: Ուրեմն մօտիկ ենք: Ծուներուն կաղ կաղկանձը՝ օդը կը պատռէ: Կառքը կը կենայ աղբիւրի մը փայտէ հիւծած կուրծքին քովիկը: Ստուեր մը կը մօտենայ, Գղի՛րն է: Տանաէրիս անունը կուտամ, Կ'առաջնորդէ: Հսկայ դուռի մը առջեւ կը հասնինք: Երկու հարուած՝ շա՛նխ, ու դուռը կռնակին վրայ կը ձռնչէ: Ճրագի մը կտուցը կը բռնկցնեն: Տունը թունդ կ'ելլէ: Պալլիկները, իրենց տեղնէն ելլելով, պաշարած են խո: Օճախը ճարճատել կը սկսի, որ ... որովայնիս ծառայութիւն մը ընէ: Կը լուսցուիմ աղուո՛ր մը: Ու գիւրուկ լէհիի մը վրայ փռուած, ա՛լ կը հանգստանամ, խօսելով ու խօսեցնելով: Մօտիկ ազգականներուս տունն եմ:







Աքաղաղներու աղաղակը կ'արթընցնէ իս խաղաղ քունէս: Աչքերս կը բանաս: Լայնփոր տունը երազոտ երևոյթ մը առերէ: Աղօտ ճըրագի մը հեւքոտ ցուքերը, մուժին ջնդիկ ստուերներուն մէջ կը խաղան, ուր մքելներու ծոցը, դեռ կը խռկան պտըլիկները: Դէմը, ճերմակ կոնի մը վարի լայն պատուածքէն, կը տեսնեմ որ գետնէն բոցեր կը վերնան, որոնց վրայ շուր կը ցրցընէ կարիճ կին մը: Թոնի՛ր կը վառեն, որուն երկու քովերը, աչիւրոտ վալաներ փռուած էին: Մէկուն վրայ կը պառկին իմորի գունտեր, զորոնք բարակ մը կը բանան խորտոիկ հարսները, աղուորիկ աղջիկներն ալ կը շարեն մէկալ վալային վրայ, ուրկէ կ'առնէ քեյվեցից, ու բափաքայից վրայ դնելով՝ կը փակցնէ թոնիւրին կողերուն: Լավաչ կ'եփեն: Ա՛լ կ'ելեմ տեղնէս: Տունին մէջտեղը, քարէ ջահքին վրայ,

կը լուացուիմ: Վերեւիս երգիպնակէն՝ բարի լոյսը կը ժպտի՛: Կը հագուիմ լման մը: Դեփուրի վրայ նախաճաշ կը բերեն: Խունկոտ ծաղիկներու և ծաղկոտ խոտերու մեղրովը համեմուած կաթը կը խմեմ, ու հակառակ առստուները բան մը չուտելու սովորոյթիս, կը լոմիմեմ տաքութիւն չոթերու մէջ պլորուած շաքարոտ կարագը: Հոգիս երազի երանաւէտ փթթումովը լեցուած դուրս կ'ելլեմ:

Նեղ ձորի մը մէջ, Սվազի Աղտ գիւղը՝ վիթի գլուխը բարձունքի մը գրած, կ'երկընցնէ իր վիթխարի սրունքնէրը: Կուչտերէն կը անկուին ցից լեռներ. որոնց կողերէն վար կը սահին, կարծես, մեծղի տուները, զորոնք երկուքի կը կիսէ ծանծաղ գետակ մը: Աչք մը կը դարձնեմ շուրջս: Երեք կողմերէ հորիզոնը կտրուած է: Բայց բաց է առջեւս: Ու հեռուն, ջինջ ճերմկութիւններու մէջ, ծիրանի լեռները, դեռ, գիշերուան երազին վրայ կը խօկա՛ն: Տուներուն ճիշտ մէջտեղուանքը, չքեղ շէնք մը կը ժպտի: Վեհաշուք տեսք մը ունի: Գեղին սպիտակ հոգի՛ն է, կարծես: Իրեն կ'ուղղուիմ: Նեղկուկ փողոցները՝ դարվար, կը փորուին, կամ դարվեր կը կորին: Կամուրջէ մը կ'անցնիմ: Մէկդիս, իր քարաշէն պատերը կէս մը տնկած, կը սպասէ անշուք



դպրոցը, ու մէկալ դիս, պզտիկ մը կը բացուի հոյակապ ժամուն երկաթ դուռը, ուրկէ ներս կը մտնեմ: Ծերունիները կ'ազօթեն աղերսոտ շեշտերով. ու պզտիկները փոխ կ'ըսեն, փողի հնչուն ձայնով: Սիւնի մը քովիկը կ'ծկտած, էս ալ կ'ազօթեմ:

Գեղէն դուրս կ'ելլեմ, խոհերուս սև բեհեզէ կ'ծիկը՝ հետիկս: Կը կոխտեմ խոտեր, որոնք գինովցնող խունկ մը կը բուռվարեն ինծի: Մտիկ կ'ընեմ թռչնիկներուն, որոնք երգ մը կուլան: Ոտքերս կը թրջին բոյսերուն մէջ, որոնց վրայ ցոլացող ցօղերը՝ ճագարներու միակ ջուրն է: Ու կը զովանամ, դաշտերու պարզունակ անմեղութեան մէջ, արեւուն կեանքոտ ճառագայթումին տակ, տիեզերական լայնութեան առջեւ: Կը նստիմ ձերունի ծառի մը գոս կոճղին վրայ, որուն վերօքը, աղբիւրի ճերմակ կուրծքի զոյգ մը ստինքներէն կաթնահամ ջուր մը կը ծորի: Ու, դէմէն, մարգերու եղեամին պէս սպիտակ, լեռներու եղնիկին պէս աչագեղ, արշալոյսի բոցերուն պէս վարդավառ, ու պուրակներու նօձիներուն պէս գեղուղէ՝ աղջիկներ, խո՛ւմբ խո՛ւմբ սափորները ուսերնուն, ջո՛ւրը կուգան: Արեւելքի վճիտ, նկարագեղ, ու գինովցնող բանաստեղծութեան աղբիւրները չե՞ն աս աղուորները, Հուսա՛, քրոջ ու նիրոջ մտերմութիւնս

ներ կը փոխանակուին: Հունա՛, ծածուկ սէրեր ու հէքեաթներ կը պատմուին: Նշանտուքի գովքը կը լսուի: Նա՛ տեղ:

Միտքս կեդրոնախուսած է ա՛լ, Գեղի կիներուն վրայ կը մտածեմ: Բայց.....:





սխալիբ, ԺԹ. դարու մէջ փնտռելու է իր անկումին պատճառները, զորոնք, առանց ետեւանալութեան ուշ դնելու, կը խաղ-խրղեմ ահա՛:

Գիւղերուն մէջ, օրոցքէն իսկ կը նշանեն պղտիկները, որոնք, պորտերնուն շորը հազիւ նետած, սխալ հասկցուած սէրի մը ետեւէն կը վազեն: Ասկէ է որ կանխահաս ամուսնութիւնները շատ կ'ըլլան, ի՛նչ որ աւերի՛չ ու անբարոյացուցի՛չ է: Ու, շատ հեղ, ծնողքները, իրենց յիմար յամառումին մէջ, արքիփ արքերութեանն ալ ականջ չեն կախեր: Հետեւապէս, իր բնախօսական պէտքը չգոհացուած ատեն, ուրիշի մը բազուկներուն մէջ փնտռել կը փորձուի անփորձ կինը: Պղտիկ հասակի մէջ կնքուած ամուսնութիւնները պարտքերու դուռ կը բանան, որուն համար, տղայ մարդը կը ստիպուի պանդխտութեան դիմել, մինչդեռ, ասդին, հարուստ մարմնով զօրեղ կինը՝ շը դիմանալով կիրքի զօրաւոր ճայնին, կախարհ վայելքին գի՛րկը կը նետուի: Վաստովորութիւն մըն ալ ընդհանրացած է. ամուսնութիւննին դեռ մուկերը չլսած, կը զատուի՛ն: Ու տունին առանձնութեանը մէջ, փորձառու աչքի մը հսկողութենէն ազատ, ծաղկատի կինը կը վաճառէ իր պատիւը՝ ամբ մը հիմայի: հիւսք մը հիլուցի, ներկուն հա-

Դ.



այց, հուսա՛, ներկուկ փակագծի մը մէջ զգացումը թոյլ պիտի տա՛յ, որ մտածումներս, իրենց բովանդակ անկեղծութիւնով, անկախօրէն ներկայացնեմ: Ի՛նչ որ ալ ըլլայ, պիտի ըսէի թէ, գեղի հայ կիներ ինկած է ա՛լ: Ժամանակագրութիւնը գերազանցապէս պարկեօս կը ներկայացնէ զինք: Ատիկայ ամէն կասկածէ վեր է: Բաղդատական Դիցաբանութիւնը ցոյց կուտայ որ Հայ կինը, հեթանոսական օրերուն, օտար ազգերու իգական սեռէն շատ աւելի շիկնող էր: Քրիստոնէութեան մէջ ալ շեշտուեցաւ իր զգաստութիւնը: Մօտաւորապէս, եթէ չեմ



յեւրիի մը, կամ լանք մը հինաիի գինովը շատ անգամ: Հատ մըն ալ որ, քաղքի մօտային հետեւելով, կարեւորութիւն չի տար եաւճախին, մուկջելուն, ծածկուելուն, մէկ խօսքով զգուշութիւնը մէկդի դրած է, որով կնորսին համար, դիւրացած է զինք ձեռք բերելու միջոցը: Աս բոլորին վրայ աւելցընելու է, մանաւանդ դասխարակութեան պակուցի՛չ պակասը, որ գեղի կնիկին կորսուելուն զլիսաւոր պատճառներէն մէկն է: Բնական է խորհիլ թէ, ժամանակի ու բարքի ընդհանուր փոփոխութիւնն ալ դեր ունեցած է աս գործին մէջ: Պիտի քարկոծե՞ն իսարգեօք, « Արգիլուած պտուղի հունձքը՝ ամուսնական մաքուր անկողնի հունձքէն առատ է », երբ ըսեմ, ինծի ծանօթ քանի մը գիւղերու մէջ գէթ: Բացառութիւնը յաւէտ յարգելի է:

Պատասխանատուութեան, մանաւանդ պարտականութեան մեծկակ բաժին մը կը ծանրանայ Առաջնորդարաններու վրայ, որոնց պլտիկ թելադրութիւններ մը կ'ուղղեմ՝ թէ որ ընդունին գեղի կնկան ինկածութիւնը դարմանելու համար:

Պէտք է որ բանիբուն փորձառու և պարկեշտ վարդապետ մը գեղերը շրջի՝ համոզկեր խօսքերով, ու պարզ քարոզներով բարոյականի սկզբունքները սերմանելու: Ժա-

մանակի մը համար դէթ: Մեր հին եկեղեցական պատմութեան մէջ կրնանք ցոյց տալ աս մասին օրինակներ, չիմա պողի՛ի համար գեղերը կը յիշուին, այո՛: Քաղաքի Ուսումնական Խորհուրդը ստանձնելու է գեղերու դպրոցներուն կրթական հոգածութիւնը: Գեղացիները սիրով կը վճարեն ծախքը: Ասով կարելի պիտի ըլլայ կեանքին միջավայրին պատշաճ կրթութիւն մը տալ երկսեռ մանկութեան, ծանօթութիւններ աւանդելով բնութեան երեւոյթներուն ու երկրագործական արհեստներուն վրայ: Մանաւանդ բարոյական առողջ դաստիարակութեան մը հիմքը դրուած պիտի ըլլայ: Արգիլելու են կանխահաս ամուսնութիւնները, օրոցքի մէջ նշանելու դրութիւնը, տարիքի ու կազմուածքի անյարմարութիւնները, ապագայ անտեղութիւններու առաջըն առնելու համար: Ու, մինչեւ որ մէկ երկու զաւակի տէր չըլլայ կին մը, թողելու չէ որ զատուի, մանաւանդ երիտասարդին իմացընելու է ատոր անպատեհութիւնները, զգուշացնելու համար, որ կնկանը խօսքին ու խորհուրդին չհետեւի, ինչ որ ի՛ր իսկ պատուը կը պահանջէ: Մէկ մըն ալ պանդըխտութեան գաղափարը արմատախիլ ընելու է գեղացիին միտքէն: Ընտանիքներ կը քայքայուին ու կ'անբարոյանան ատոր երեսէն:



Վերջապէս, հիմնական բարեշրջութեան մը համար, հարկ անհրաժեշտ է, որ, գլխաւոր նահանգներու մէջ, ընծայարաններ բացուին, գիւղերու մուցուած համայնքին՝ ուսեալ, պարկեշտ, խօսող ու անձնուէր քահանաներ տալու համար: Ատիկա դրամով կ'ըլլայ, պիտի ըսեն: — Վանքերու եկամուտները ասկէ աղէ՞կ նպատակի պիտի ծառայեցնէին, կը պատասխանեմ: Իմ խոնարհ կարծիքս է՝ ասիկա:



Ե.



ա՛ տխուր մտածումները կը պտուտակին գանկիս եփ ելած պտուկին մէջ, երբ ըզգացի թէ, արեւուն կրակոտ ճառագայթները՝ ճակատս այրե՛ր են: Աղէկ որ աղբիւրը քովիկս է: Զով ջուրը հո՛ւրքը կ'առնէ: Տուն կը դառնամ: Ո՛րչափ սպասեր են: Սեղանը կը դրուի. նահապետական ընտանիքը շուրջս է: Շատուորով հաց ուտելը ի՛նչ զուարճալի է: Քովիս նոր հարսը՝ հինգիս պատ կը քաշէ իմ դին: Դէմիս պզտիկը կը թղկայ: Նանին հին օրե՛րը կը յիշէ: Սեւաչուի աղջնակ մը կը թախանձէ, որ զինք հիւր տանիմ մեզի, Համագամ կերակուրներու տեսքէն, ու սատեսարաններու համէն կշտացած, պարզուկ թիկնաթուռի մը գիրկը կը նետուիմ: ուրկէ կը սկսիմ. . . պատառնին համրել, Ծիծաղելով գլուխնին կը փարտեն: Սեղանը վեր-



նալէ վերջ, համեղ ու անմեղ ասուլիսներով կարօտնիս կ'առնե՞նք: Ապա՛ իրիկուան դէմ, կ'ուղղուիմ դէպ ի Տուզլա, անկէ ալ վանքը երթալու համար:

Երեք դիէն հսկայ լեռներէ պրկուած խորունկ ձորի մը մէջ կը պառկի Աղծովը<sup>(1)</sup>, որուն առաջքը միայն բաց է, ուրկէ ներս կը մտնեմ: Զախ կողմը, փառաւոր շէնք մը կը բարձրանայ: Ատոր դէմը, ազահանքի բերնէն, յարդգողի ձերմակ ձամբայ մը կ'երկրննայ դարվար: Հարթ գետնին վրայ, ալ պատրէ լայն լանջքերնին բացած, տասնեակ մը աղջուրի աւաղաններ կ'արեւոտեն: Քիչուկ մը վերօք, նիհար շուքերնին կերբրցնեն պրակ մը վտիտ ծառեր, որոնց ետեւն ի վար: աղեղնաձեւ տարածութեան մը վրայ, բանջարեղէնի պարտէզ մը կը տեսնուի: Շուրջի լեռները՝ կանանչ, կարմիր, կապոյտ ու գորշ գոյներով խառուտիկ լաթեր հագած են: Ուրիշ աղծով մըն ալ կայ. հինգ բոպէ անդին, ծանծաղ ձորակի մը ծոցը: Աս երկու քէն տարին 250,000 քիլոկրամ աղ կ'ելլէ: Առանց երկրաբան ըլլալու, պիտի ըսէի թէ, հոս ժամանակին մեծատարած ծով մը ապրած է: Պահիկ մը բոլոր ասոնք դիտելէ ետքը, շէնքին կը մօտենամ: Ու դուռին առջեւ, ձեռքը կը սեղ-

(1) Թուզլայի տեղական անունը:

մեմ բարեկամիս, Edouard Saboին<sup>(1)</sup>: Վեր կ'ելլենք: Ժամ մը հոս կը մնամ: Եւ երբ ըսեմ թէ Պոսլէրի թախծո՛տ, հիւանդկախ, ու սկեպտիկ տողերն ու տաղերը չափեցինք, հակասական չըլլա՞ր, սա՛ զուարթ վայրերու ծոցը, կեանքոտ օդին մէջ, վճիտ լոյսերու յորդումի ներքեւ: Հրածեշտ կ'առնեմ: Հետիոտն եկած էի՝ ձիաւորուած կը մեկնիմ: Ու ցից լեռներու օձիկ շաւիղներու մէջ, հինգ բոպէ, ձիս թափոր դառնալէ վերջ, ա՛լ կը հասնիմ վանք:

Միւսուր թիւերու շրջանին մէջ շինուած է, Ս. Հրեշտակապետ<sup>(2)</sup>, որ Սվազի թեմին է՛ն հարուստ վանքն է. հողի տեսակէտով, Ունի նաև 23 կտոր հայերէն հին ձեռագիրներ<sup>(3)</sup>: Ասոր շրջապատին մօտ, Խաչքուր ըսուած գերեզմաննոցէն, 1871ին, Սրբոց Գոհարինեանց ոսկորները գտնուեցան արկղաձեւ շարուածքի մը մէջ տեղաւորուած. վրան քսան հարիւրորդամեդը մեծութեամբ սպիտակ քարէ խուփով մը, որ ետեւերես, գլխագիր տառերով արձանագրութիւններ կը կրէր:

(1) Ingénieur-inspecteur des Salines :

(2) Տրդատ եպիսկոպոս Պալեան:

(3) Վարդապետի մը կողմէ հեղինակուած ..... անտիպ սիրային քերթուածներու հաւաքածու մը կար: Այս անգամ չտեսայ:



(Երեսինը)

ՈՐ ԳԱՏԱՐԵՅԱՆ ՎԱՍԵ ՔՐԻՍՏՈՍԻ ՌԱՏԻԿՈՍ

ԳՈՀԱՐԻՆԷՆԷ ՏՆԿԻԿ ԵՒ ԵԱՄԻՊԵՍ

(Ետեկինը)

ԵԴԱՆ ԹԱՅՍ ՏԵՂԻՈՋ Ի ՁԵՌՆ Ս. ՎԱՐԴԱՊԵՏԻ

ԲԱՐՍՂԻ ԹՈՒԱ. ՈԼՁ.

Չորս հարիւր տարի առաջ նորոգուած է Դերջանցի Մաշաքիա վարդապետի ջանքովը: Մեր օրերուն, Չառացի Մովսէս վարդապետը, որ աշխոյժ ու աշխատասէր եկեղեցական մըն է, մասնական նորոգումներ ընկելով՝ շէնցուցած էր: Սակայն, հիւսա, սենեակները ամբողջապէս իջած են, թէեւ պարսպին քիթը խոռած չէ. իսկ զեղակերտ շքեղ եկեղեցին՝ անվկանդ կը կենայ դեռ: Մօտերս մասնախումբ մը ընտրուեցաւ, որ լքուած հողերը հովուէ: Երուսաղէմի միաբան Եսայի վարդապետ վանահայր դրուած է: Այս վանքին դիրքը հիանալիօրէն բանաստեղծական է: Լայնանիստ լեռան մը լեռի կողին նստած, կը նայի Ալիսին, որ հեռուն կը թաւալէ իր ալիքները: Սա տեղ օձի պէս

կ'ողորուի. հայելիի մը նման կը փռուի անդին: Կը դիտէ հեռուի լեռները, որոնք կանանչներ հագած, կամ ճերմակները փաթթուած, ու յաւէտ կապուտիկ շղարչներու ետեւէն, վեհանոյշ դիցուհիներու նման կը ժպտի՞ն: Աչք կը պտտցնէ լայնածաւալ դաշտերուն վրայ, որոնք, իրենց հարուստ ծոցին մէջ, կը հիւրասիրեն իր սիրական գեղերը: Գեղացիներու սիրականն է աս վանք, անանկ որ մինչև տասը ժամ հեռու տեղերէ, Աղտու (1) Ս. Հրեշտակապետի ոտքը կը բերեն, կը յորդեն իրենց թախիծն ու թախանձը:

(1) Ժողովուրդը Յաղթու Ս. Հրեշտակապետ կ'ըսէ: Ոմանք կը կարծեն թէ, յաղթած է՝ ու կը նըշանակէ հոյ, հոյ: Ատիկա սխալ է: Գովի գեղին անունն է Աղտ (աղի հանք=թուղլա) որուն սեռականը կ'ըլլայ՝ Աղտու: Հետեւապէս՝ Աղտու Ս. Հրեշտակապետ ըլլալու է շիտակը:



Զ.



րկթէ դուռնէն ներս կը մտնեմ :  
 Յոր լուռ թիւն մը կը տիրէ : Գրու-  
 նապանը զիս Առաջնորդարան կը  
 տանի , ուր կարբիրացի բարեկամ-  
 ներս՝ բառբառելով կը ճաշակէին . . . Երա-  
 նոս աղային ուլը , ուրկէ ինծի՝ ալ բաժին  
 կը հանեն : Կը զուարճանանք : Անո՛ւշ ըո-  
 պէներ : Պահ մը ետք , պատուհանը կ'ելլեմ :  
 Իրիկնամուտի կիսաչէկ աղօտ թելերը , վա-  
 րանոտ ծփանքով մը , վար կը ցանցնուին :  
 Գուրսի անօսը մութը , ներս սահելով , իր  
 բեհեզէ փէշերը կը քսուըռտէ սենեակի յա-  
 տակին ճերմակ մերկութեանը վրայ : Գորշ  
 նշոյլներու թախծոտ տարամութիւնը՝ կը  
 գրկուի նիհար ստուերներու դանդաղ ա-  
 ճումին հետ : Ծառերուն թուխ կանանչէն  
 կը կախուին՝ հետզհետէ խտացող սևին ծը-  
 ւէնները : Ու աս մեղանուշ աղւորութիւննե-  
 րուն վերեւ , ծաւալուն ծաւի ծածկը՝ կը

ծաղկոտի ծածանուտ փթթումներովը լու-  
 սաւորներուն : Լուսաշուի լուսնակն ալ , վե-  
 րէն կանթեղ կախուած , իր ձիւն շողերուն  
 հմայքը վար կը շարմազէ : Բակը կ'իջնենք ,  
 ուխտաւորները ծայր տուեր են արդէն :  
 Կուգա՛ն : Մի՛նչեւ լոյս կուգան : Հոս ու հոն  
 պճլտացող ճրագի նետերը՝ գիշերուան լայն  
 շղարշը կը ծակծկեն , վանքը ոգեւորուած է  
 ա՛լ : Տքթ . Պայընտրի հետ , հսկայ խարոյկ  
 մը կը սարքենք , ատրուչա՛ն մը : Ու բոցերը  
 կը պարեն օդին մէջ , Եեփորը ձայն կուտայ ,  
 Երիտասարդն ու հալւոր , հարուստն ու աղ-  
 քատ , զարգացածն ու գեղջուկ , քաղքջին  
 ու լեռնցին , ամէ՛նքը ուրախութեան ելեք-  
 տրացումին մէջ շոգիացած , ձեռք ձեռքի ,  
 անհուն բոլորապարը կը սկսին՝ խարոյկին  
 շուրջ : Հուրիններն ալ , անդին , ուրիշ հուրի  
 մը բոլորաթիքը կը դառնան արբշի՛ւ , խելա-  
 յե՛ղ , Յոգնիլ չիկայ : Հոգիները չե՛ն յա-  
 գենար : Երջանակը մի՛շտ կը լայննայ : Խա-  
 ղերը իրար կը խաշածեւեն : Ձայները չե՛ն  
 մարիւր : Գիշերը գոյութիւն չունի ա՛լ : Հիա-  
 ցի՛կ ու գինո՛վ , մտիկ կ'ընեմ : Գեղջկական  
 սիրային տաղերուն մէջ , իրենց հո՛գին է որ  
 կը ցոլայ :  
 Կեանքիս մէջ , չեմ յիշեր գիշեր մը , որ  
 աւելի՛ կենսալիւր , աւելի՛ լայն , աւելի՛ մեծ ,  
 աւելի՛ հոմերական ըլլայ , քան աս ներմակ



գիշերը, զոր հանդարտ մը կը վայելեմ սա՛ ընդարձակ բարձրութեան վրայ, երկնքին տա՛քան մօտիկ, քաղքէն ալ ա՛յնքան հեռո՛ւ...:

Կոչնակի սիրահունչ ձայնը կը գուժէ՛ այգը, որ ճերմկութիւններու մէջ կը նազի: Պայրը՛նը միաքս կուգայ. « Ու ես ատե՛ցի ատ լոյսը »: Եկեղեցին ենք:

Հիմա՛կ ալ, կրօնական բանաստեղծութիւնները կ'ըմբռնանք, որոնք տրամանուչ համ մը ունին: Բրիստոնէութիւնը՝ թախժոտ հե՛ւք մը դըլաւ մեր արեւո՞տ քնարերգութեան վրայ: Շարականները՝ խանդոտ ու բարձր բանաստեղծութիւններ են, որոնց վրայ մեր Շնորհալիներուն լայն հաւատքին տա՛ք շունչը կը սաւառնի: Թէեւ եղանակները, հետզհետէ, կը կորսնցնեն իրենց բընատոհմիկ հետքը, քմահաճ երաժիշտներու երա՛շտ բերնին մէջ (1): Եկեղեցին ասեղ ձըգելիք տեղ չիկայ: Տ. Սահակ վարդ. Օտապաչեան՝ սիրուն ու սահուն լեզուով, մանաւանդ հասկնալի բացատրութիւններով, Վարդավառի վրո՛յ կը խօսի, Երանի՞ թէ, դուր-

(1) Աս կողմերը, մեծ համբաւ համած է Յակոբ էֆ. Մէսիսեան, Ասիկա որքան անուշ ծայն ունի, ա՛յնքան մըն ալ ընտիր ու քնատոհմիկ եղանակներ գիտէ: Սվազցիները մեծ ու պզտիկ, կը յիշեն իր եղանակները, ու կը գնահատեն անկեղծօրէն:

սը, բաց օդին մէջ քարոզէր, որ ամէնքն ալ լսէի, ծծէի՞ն՝ երիտասարդ Արմաշականին տտ անո՛ւչ բանախօսութիւնը: Ա՛լ դուրս կը նետուիմ:

Տօն ու տուրք՝ լեզուական առնչութիւն ունին: Ժողովուրդը, բանասէրի մը պէս, գիտէ ատ բանը: Հետեւապէս, իւրաքանչիւր տօնի, սիրայօժար կը բերէ իր տուրքը, ցորեն, գարի, գառնուկ, ուլ, երինջ, ի՛նչ որ ունի: Հայր՝ գերազանցապէս բուխսիրտ, ողորմած ու կրօնասէր է:

Ճաշելս ու դուրս ցատկերս՝ վայրկեանի գործ կ'ըլլայ: Սար ու ձոր մարդ կտրեր են: Ծովու մը ալիքներուն պէս կը տատանի ամբօխը, որու դէմքին վրայ կը խաղայ ուրտաւորի յորդ ճառագայթումը: Ուրախութիւնները սկսած են արդէն: Չայները կը ցատկառեն օդին մէջ, Արմոնիկ կը թրթրոայ ծառերուն տակ, ուր, խումբ մը երիտասարդներ, սեւ կալօնին շուրջը բոլորած, կեանքի ջուրը (•) կը ծծեն: Ժայռերուն մօտիկ, կարգ մը տղաքներ կը զուարճանան, որուցմէ մէկը, սազը գիրկը, ձեռքն ականջին, մանի մը կը փարտէ: Խաչըլուրի վերեւստած, պառաւները կը խօսուրառեն Ս. Գոհարինէի վրայ, Կանանչուկ լաճեր՝ սըրունքներնուն ուժը կը փորձեն: Օձ ու բոց պզտիկներ, ջուր կը սրսկեն անցնողին վը-



ըայ, երկու կտրիճներ իրար հիւսուած, կ'ըմբշտամարտին, լայն շրջանակի մը մէջ, Սրմայ մազերով, կամար յօնքերով, վառ վառ աչքերով, խնձոր երեսով, ծիրան շուրթներով, շուշան կուրծքերով, բարտի հասակով հարսներ ու աղջիկներ, ծամկալը ծուռ մը դրած ձակտնուն, լուսաղբիւրն ի վեր ժուռ կուգան նազելաճէմ:

Ու մէջտեղը համայնական պարը կ'եռայ: Ծերունիներ ու երիտասարդներ, ծանօթներ ու անծանօթներ, հսկայ օղակ մը կազմած, փողի ձայնով, մէջքակոտոր, ծնկածալիկ, գլխաշարժիկ, ոտնատրոփ, ետեւառիկ կը պարեն ու կը կայթեն:

Դաշտային այս ինչոյքն ու հաճոյք՝ կը շարունակուին մի'նչեւ իրիկուն, մի'նչեւ լոյս, երկո՛ւ օր ամբողջ: Ու ես, տեղէ տեղ ցատկերով, բարձունքէ բարձունք թառելով, պատկերները կ'առնեմ՝ ընտիր փօսախօյր աչքի՛ս:



Է.



Վանքերու (1) շուրջ կատարուած սոյն սովորուած թիւններն ու ուրախութիւններ՝ հեթանոսական դարերու կրօնական յիշատակները կ'արթնցնեն սրտիս մէջ: Ու, կոնակըս ծառի մը տուած, երեւակայութեանս նուրբ շղարչին մէջէն, կը նայիմ հեռուի լեռներուն, ուր, դարեր

(1) Վանք կամ Վան կը նշանակէ օթեւան: Քրիստոնէութենէ ալ առաջ գոյութիւն ունէին վանքերը, որոնց մէջ գտնուած աստուածութիւնները կը կոչուէին Էւրոպէ կամ Էւրոպ, այսինքն՝ հիւրընկալութիւն տուող: Քրիստոնէութեան առեւ, վանքերը աւելի՛ շատցած են: Պատմութիւնը կ'ըսէ թէ, 2000է աւելի վանքեր ու մենաստաններ ունեցած ենք: Հաւանական է որ չափազանցութիւն եղած ըլլայ ատիկա: Հաստատուած է սակայն որ 500 մը վանքեր գոյութիւն ունեցած են, որոնցմէ ոմանք անհետացած, մէկ մասը կիսափուլ, շատերն ալ կանգուն են դեռ: Թուրքիոյ մէջ ունինք 260էն աւելի վանք, Ռուսիոյ մէջ՝ 150 ու Պարսկաստանի մէջ 3: Շատե-



առաջ, սա՛ օրերուն, կը հաւաքուէր աշխարհախուժք բազմութիւն մը, որ, մոռցած իր անային ու դաշտային աշխատութիւնները, եօթը օր ու եօթը գիշեր, խրախ-

րուն անահնկայ մը պիտի ըլլայ ըսել թէ, Եւրոպայի, Ափրիկէի, Միջերկրականի մէջ ալ 10է աւելի հայ վանքեր ունինք՝ Մոռայի, Վենետիկի ու Վիէնայի վանքերէն զատ: Եգիպտոսի մէջ ունինք՝ Զահրաթ վանքը, Կրէտէի մէջ՝ Ս. Կարգեթ վանքը (ուր կ'արտորուէին յանցաւոր կրօնաւորները): Կիպրոսի մէջ Սուրբ մենաստանը ու Ս. Մարտի վանքը, ձենովայի մէջ՝ Ս. Բարդուղիմէ վանքը, Հոռովի մէջ՝ Ս. Անտոնի վանքը, (որ հիմա զրաւուած է): Նարոլիի մէջ՝ Կարապետ մը, Սուչովայի մէջ՝ Հարապետ վանքը, Ռումանիոյ մէջ՝ Արքեպիսկոպոս վանքը, Լուսաւորայի մէջ, ու Նոր Նախիջեւանի մօտ Ս. Խաչ վանքը:

Թուրքիոյ վանքերը Եփրատայ, Տիգրիսի ու ձորոտի եզերքը, արծաթ ալիքներու կամ թուխ պուրակներու մօտիկ, ձորձորի մը խորքը, կամ լեռան մը կողերուն վրայ, Տրոպիզոնէն մինչև Երուսաղէմ, Արմաշէն մինչև Վարազ կը տարածուին՝ լի սուրբերու գերեզմաններով ու մատենաներով, որոնց ուխտի կուգան հեռաւոր գաւառներէ, նուիրական անարդուութիւններով ծանրաբեռնուած, զորոնք հայրն իր զաւակին կը հաղորդէ երկիւղած, եւ որոնք՝ իբր ժառանգութիւն կը փոխանցուն սերունդէ սերունդ: Վանքերու մասին ու սուամասիքութիւն մը հրատարակած է Հրանտ Ասատուր, մեր լուրջ բանասէրներէն մէկը, որուն տեղեկութիւններէն օգտուած եմ մեծապէս:

ճանքի կեանքը կ'ապրէր: Հոտ, առ բարձունքին վրայ բազմած կ'ըլլային զգաստութեան մայր՝ Անահիտը, սէրի աստուածուհին՝ Աստղիկը, ու արմտիքի դիցուհին՝ Դէմէտրէն: Անահիտին մատաղցու կը բերէին սպիտակ ցուլ կամ երինջ: Զոհին արիւնէն՝ փայտակոյտին, ու Արածանիի ջուրէն ժողովորդին վրայ կը սրսկէր (1) քրմապետը, հաշտութեան ու քաւութեան խորհուրդը կատարելու համար: Ուխտաւորները, առ օրինակին հետեւելով, իրարու վրայ ջուր կը ցանցեցին: Իսկ աղաւնիները կը բոցեցին, որ քուրմերը՝ անոնց խորհրդաւոր մրմունջներէն գուշակեն զոհին ընդունուիլը կամ մերժութիւնը: Աստղիկին կը նուիրէին բրաբիոնի, գինեբրուկի, շուշանի ու վարդի գունեղ փունջեր, որոնցմով զարդարկոտ հսկայ տաճարը՝ կը ճոխար ու կը շողար վարդավառ:

(1) Եկեղեցիներու մէջ, աղանակերու անօժով ժողովորդին վրայ հոտաւէտ ջուր սրսկելու սովորութիւնը՝ եփրայականէն աւելի՛ հեթանոսութենէ մնացած է: Հայ եկեղեցիի կարգ մը սովորութիւնները լաւ հասկնալու համար, պէտք է տեղեկութիւն ունենալ մեր հեթանոսական կրօնքէն, որ մեր քրիստոնէական գաղափարներուն ու աստուածապաշտութեան եղանակին վրայ իր ազդեցութիւնը ունեցած է: Մեր է՛ն անուշ անուններէն մէկը՝ Աստուած բառը անգամ, կը կարծուի թէ, Արամազդի կամ Ահուրամազդայի մէկ եղանակաւորումն է:



Իսկ Դէմէտրէին կ'ընծայէին որաներ ու խըն-  
 ձորներ (1), Գրմապետը, բազկատարած կը  
 խնդրէր Անահիտէն՝ իր ժողովուրդին հա-  
 մար, զգաստութիւնն է ու խաղաղութիւնն :  
 Աստղիկէն՝ ամուսնացեալներուն համար սէր  
 ու հաւատարմութիւնն, Դէմէտրէէն՝ դաշ-  
 տերուն համար առատութիւն ու պահպա-  
 նութիւնն : Հիմա, քրիստոնէայ Վարդավա-  
 ռին մեծ աղօթողը (2) սոյն այս բաները ՆՈՅ-  
 ՆՈՒԹԵԱՄԲ շը հայցեր Գերագոյն էակէն :  
 Կուռքերու արձանները կործանեցան, բայց  
 կրօնական զգացումները կանգուն մնացին,  
 կրօնքը փոխուեցաւ, սակայն սովորութիւն-  
 ները ապրեցան, ու, փոխանակ մէկ վայրի  
 մէջ սահմանափակուելու, տարածուեցան ա-

(1) Մինչեւ հիմա, շատ տեղեր, Վարդավառին  
 խորանը կը գարդարեն արաներով ու քարերով, մա-  
 նաւանդ գեղերու մէջ : Ասկէ գտա, քանի մը գա-  
 լաւներու մէջ, խնձորի պահի կը պահեն, այսինքն  
 մինչեւ Վարդավառ խնձոր չեն ուտեր : Պառաւնեքը՝  
 կ'ըսեն թէ, առկէ առաջ խնձոր ուտողին ակռաները  
 փտուկ կ'ըլլան : Դձուտէն կը տնօրինէ եղբր  
 ատ պատուհասը : Դամէտոս անունը շատ փնտուցի  
 բանասէրներու գործերուն մէջ, սակայն չկրցայ գրտ-  
 նել : Արդեօք Դէմէտրէի՝ արմտիքի դիցուհիին մէկ  
 աղաւաղումն է :

(2) Աղօթք վասն Ալլակերպուծեան՝ եղիշէ վար-  
 դապետի, կամ Ոսկեբերանի՝ նորագոյն ծանօթու-  
 թիւններու համաձայն :

մէն դի : Մեր բանաստեղծ Հայրապետները՝  
 չկրցան զսպել ան կրօնական աւիւնը, որ,  
 տարտամ դարերու ընդմէջէն, կը հոսէր ու  
 կը հասնէր իրենց երակներուն մէջ : Հետե-  
 ւապէս, շատ հեղ ու շատ տեղեր, իրենց  
 բանաստեղծութիւններուն՝ շարականներու,  
 տաղերու, ճառերու եւ աղօթքներու մէջ,  
 նմանութիւններ ու ակնարկութիւններ ըրին  
 արեգակին (1), լուսինին ու աստղերուն, ո-  
 ռոնք ոգեպաշտութեան (2) վերջին փուլերը  
 կը ներկայացնեն :

(1) Հին Հայերը՝ արեւն ու լուսինը կ'ընդու-  
 նէին իրը քոյր ու եղբայր աստուածներ : — Արե-  
 գակի երկրպագութիւնն խոր արմատ ձգած է մեր  
 մէջ : Կ'աղօթենք դէպ ի արեւելք, եկեղեցիները կը  
 շինուին դէպ ի արեւելք, կը պառկինք դէպ ի ա-  
 րեւելք, ու . . . կը թաղուինք դէպ ի արեւելք :  
 Երբեմն, տուներու մէջ կը պառկին դէպ ի արեւ-  
 մուտք՝ հնազանդած ըլլալու համար արեւ, որ կը  
 ներկայացնէ Արհմը՝ սատանան : Ու ատիկա կ'ընեն  
 չպատուհասուելու, չտանջուելու հաւատքով : Եկե-  
 դեցիին մէջ ալ իր հետքը թողուցած է սա սովո-  
 ռութիւնն : « Հրաժարիմք ի սատանայէ (արեւմուտք  
 կը դառնան) եւ դառնամք ի լոյս աստուածգիտու-  
 թեան (կը դառնան դէպի արեւելք) » : Լուսինն ալ  
 պաշտուած է : Մինչեւ հիմա, երբ պտիկները ձն-  
 քով ցոյց տան լուսինը, պառաւնեքը անմիջապէս  
 կը հրամայեն որ մատներնին խածնեն, որպէս զի  
 չպատժուին Լուսինայ Պաշտութիւն :

(2) Մինչեւ Աստուածածին խաղող չուտուելու,



Հեթանոսութեան օրերուն, վանքերը կը բնակէին քուրմեր ու քրմուհիներ՝ իրենց մասնաւոր կուռքերուն հետ: Վանքերը էր-րիսոնճեանալէ ետքն ալ, պահեցին անուննին ու հին կրօնքէն ինչ ինչ հետքեր. զորոնք միջանկեւարար, համառօտակի պիտի յիշատակեմ:

Հեթանոս հայերուն հին կրօնքին<sup>(1)</sup> հիմ-կամ խաղողի պահիր պահելու սովորութիւնը՝ ոգեպաշտութեան մէջ հետքն է: Աս մասին, սա՛ աւանդութիւնը լսուած է Երզնկայի գեղերուն մէջ: Օր մը հայր Աբրահամու տունը հիւր կ'իջնէ Աստուած: Աբրահամ, իր ո'կըը պատուելու համար, որթ մը (հորթ) կը տորթէ: Միսը ուտելէ վերջ, ոսկորները կը թաղեն: Իրիկունը կովը կուզայ, ու բաւաջելով՝ որթը կը փնտռէ: Աստուած ալ գծալով անասունին վրայ, կը հրամայէ որ ոսկորները բերեն: Ու նորէն որթը կը ստեղծէ: Սակայն, մէկ ոսկորը անուշաղբուծեամբ զուրսը մնացած ըլլալուն, կը պատուիրէ Աստուած, որ անկին: Ու... քրմուհի կը բուսնի: Ահա՛ աս հրաշքին համար, Աբրահամ հրամայած է խաղողի պահիր պահել, որ կը տեսէ մինչև Տիրամօր տօնը:

(1) Մեր նախկին կրօնքին վրայ կցկտուր տեղեկութիւններ միայն տուած են Ազաթանգեղոս, Ջե-նոթ Փաւստոս, ու Խորենացի: Մեր մեհենական մատենագրութիւնը auto-da-féի գոհուած է եկեղեցական հայրերու կողմէ: Ռ՛վ գիտէ ո՞րքան հրաշքակերտներ պիտի ունենայիր՝ ղիւցագուական երգե-րու, ղիցավէպերու եւ աղօթքներու հաւարածոներու մէջ, թէ որ այրած չըլլային. ես կը կարծեմ թէ օտար գրերով ու մայրենի լեզուով մատենագրութիւն

քը, բարեշնչումէ բարեշնչում անցնելով, կ'ըսուի թէ, ԵՐԿԱՍՏՈՒԱԾՈՒԹԻՒՆՆԸ եղաւ: Ջէնո-Ավետաա ու Վէտա՛ ատ կրօնքին վար-դապետութեան ազբիւրները եղան: Ոգեպաշտութեան բոլոր փուլերը երեւցած են՝ մեր մէջ: Երկրորդ փուլին մէջ կը յիշուին երկինքի, աստուծոն, աբելուն, լուսնին, կրակին, բարի ու չար ոգիներուն եւ

մը ունենալէ զատ, ունեցած ենք նաեւ Բանաստեղծութիւնը: Գրեցին ինչ-ինչ բաներ: Գրեցին բաներ եւ ուրիշ մանր մունր յիշատակութիւններ՝ ըսածիս ապացոյցները չեմ կրնար ըլլալ:

Մեհենագրերու կորսուելուն համար, մեր Հեթանոս վրայ լիակատար տեղեկութիւններ չի կան: Հայ բանասէրները՝ պատմիչներու միջոցով հասած սակաւաթիւ տեղեկութիւնները ու ժողովուրդին հոգիին, սրտին, միտքին մէջ անջնջելի մնացած հետքերը համեմատելով Արիական կրօնքին հետ, ունեցած են Հայ Գեոգրաֆիկ Գիտութիւնների Ընկերության և Արիական, մասնաւոր խնամքով մը, զբաւող ու անգիր դպրութեան մէջ ինչ որ կայ հին կրօնքին մասին՝ հաւաքած ու հատորներու մէջ ամփոփած են: Կ'ըսուի թէ, մեր էն կարող բանասէրներէն մէկը Դուրեան եղիշէ Սրբազանն ալ պատրաստած է հատոր մը, որ, եթէ հրատարակուի, պիտի կրնայ նոր լոյսը սփռել աս կարեւոր խնդիրին վրայ: Դ. Խաչկոնց ալ, աս մասին ուսումնասիրութիւն մը հրատարակած է: Դեռ կան ուրիշ փորձ բանասէրներ, որոնք միշտ նոր յայտնութիւններ կ'ընծայեն՝ մեր Հին հաւատքին վրայ:



ասոնցմէ պատճառուած քանի մը հիւսանդու-  
քիւններու պաշտամունքը: Իսկ առաջին փու-  
լին մէջ կը դասաւորուին՝ կենդանիներու,  
ծառերու, քարերու եւ ջուրի պաշտամունքը,  
որոնց հետքերը բացարձակապէս մնացած  
են մեր վանքերուն շուրջ:



Ը.



նչպէս շատ ցեղերու,  
անանկալ Հայերու մէջ  
պաշտուած գլխաւոր կենդանի-  
ներն են, օձ, առիւծ, ինձ, կո-  
րիւն, խոյ, շուն, կասու, մուկ,  
անծեղ, անգղ, Լայլն, Եւայլն:  
Սըվազի թեմին մէջ կայ Դեւ-օձան վանքը,  
Վանի թեմին մէջ՝ Առլեզի եւ Անգղի վան-  
քերը, Եւայլն: Ասոնք իրենց հին աւանդու-  
թիւններն ու նիւթական հետքերն ունին,  
որոնք կը մատնեն Հայերուն երբեմնի ԿՏՆ-  
ԴԱՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ (1): Պիթլիզի լեռնային

(1) Ռամիկը տունին օձը չի սպաններ, պահա-  
պան է, կ'ըսէ: Առջեւը կաթ կը դնէ որ ուտէ, ու  
կ'աղաչէ որ երթայ ատկէ: Օձսպաշտութեան նշան  
կը համարուի շատ մը տեղերու անոնց անունով  
յիշուիլը, ինչպէս՝ օձեւ, օձեբեր, օձեբեր, օձեւուտ,  
Ֆււււււււււ: Մեծ օձը, հայ երեւակայութեան մէջ  
վիշապ կոչուած է, Ասիկա կը պաշտուէր: Եզնիկ ա-  
ւանդած է իր եւէ -ււււււ գրքին մէջ: Քանի մը



սրբավայրերը ունին Սօսիի պուրակներ, որոնց ճիւղերէն քուրջեր կը կախեն: Երզրնկայի Ս. Կիրակոս վանքն ունի Բարձի մը, որուն բոլորտիքը խելագարը պառանտով՝ կը բժշկուի, կ'ըսեն: Գառնիկ ճգնաւորին Գիհիի ծառէն թէ որ ճիւղ մը փրցուի, արիւն կը վազէ եղեր, ու կտրողը՝ գրողը

յատուկ անուններ, կը կարծուի թէ, կենդանիներու պաշտամունքէն ծագած են, ինչպէս՝ Աւէն, Կրեւ, Ընչ, եւայլն: Յովհ. Իմաստասէր ու Ներսէս Շնորհալի Կաթողիկոսները կը յիշեն թէ կատուին հաւատք կ'ընծայէին հայերը: Պառանքը սանկ բացատրուածին մը կ'աւանդեն: Յիսուս, դուռէ դուռ մուրացած պահուն կը տեսնէ որ մուկերը տունին մէջ հէտէ կը խաղան, ուստի շուտ մը թաշկինակը հանելով կը նետէ մէջերնին, ու . . . կատուն կ'ըստեղծուի այսպէս: — Ղազար Զահկեցի կաթողիկոսը կը զգուշացնէր հայերը՝ հարձ կատարելէ: Կիները դեռ կը հաւատան թէ, մուկերը իրենց լաթերը չեն կտրտեր, թէ որ հարձ կատարեն, այսինքն բան չբանին: — Շունն ալ պաշտուած է: Վանի մէջ, մեծ պահի առաջի շարժուած Ուր. օրը՝ հարձ նուիրուած է: Առլէզ ու շուն՝ կը նոյնացնեն ոմանք: — Հայաբնակ քանի մը տեղերու մէջ ճամբորդութեան ատեն, ուշադրութիւն կ'ընեն հարձ մը կամ հարձ մը ճախրելուն կամ կարկաչելուն: Թէ որ մէկ հեղ կարկաչէ՝ անյաջողութիւն կ'ենթադրուի. եթէ երեք անգամ կարկաչէ՝ յաջողութիւն կը թարգմանուի: — Պառանքը կ'ըսեն թէ, ով որ մրջիւն մը սատկեցնէ, դատաստանին օրը, ճկոյթ մատովը ժամ մը պիտի շինէ:

կը տանի, վանի Ականց Ս. Գէորգ վանքն Հացի ծառերը՝ հրաշք գործելու զօրութիւնը ունին, կը կարծուի, ատոր համար խունկ կը ծխեն շուրջը ու տերեւներովը կը լուացուին: Ասոնք հայերուն ՍԱՌԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ(1)

(1) Արմաւիրի Սոսիայ անտառը պատգամատեղի էր. տերեւներու մեղմ կամ սաստիկ ստափիւնէն հմայութիւններ կը հանէին, ինչպէս որ կը յիշեն Խորենացի ու Յովհ. Կաթողիկոս: Միջազգայնի Շամոշատ քաղաքին մէջ, Արեւորդիք կոչուած հայ անդաւաւրները՝ Բարձի կը պաշտէին: Ատոնք զգուշացնելու համար, յատուկ թուրք գրած է Շնորհալին (Ընդհանրական, 225): Աւանդութիւն մը կար թէ Յիսուսի խաչին փայտը Բարձի ծառն էր:

Սոսի, Բարձի, Գեհէ նուիրական ծառերէ վերջ, սուրբ համարուած են Ընչ, Կրեւ, հարձ բոյսերն ալ:

Լոշտակը ( մանրագոր, մարդատունկ, մարդախոտ, մարդածաղիկ ) զագանները եւ սողունները կեցնելու զօրութիւնը ունի, կ'ըսեն: Այնքանոր թագաւորը, իբր թէ, ատով շատ գործ տեսած ըլլայ: Լոշտակը կը հանեն, երբ Հրատ մոլորակը՝ Խոյ կամ Այծեղջիւր աստեղատունին մէջ գտնուի: Օրը Գըլլալու է: Արեւը ցածած ատեն, ասոր բոլորտիքը կը փորեն, երբ առկախ մնայ, չուան մը կ'առնեն որուն մէկ ծայրը քաղցած շունի մը վզին ու միւս ծայրը լոշտակին կապելով կը փախչին: Կ'ըսուի թէ, շունը կը սատկի, բոյսը հանելէ ետք: Ասիկա զեղալ է: « Մանրագորն եթէ որ լոկ ուտիցէ՝ սատակից է, եւէ խառնեալ ընդ այլ արմատս՝ քնածու լինի քնահատաց »: Եղծ աղանդոց Ա. Ժն:



բացորոշ նշաններ չե՞ն կրնար ըլլալ: Էրզինկեան Ս. Լուսաւորիչ վանքին քովի Բարին համար կ'ըսուի թէ, եկեղեցին շինելու ատեն, Ս. Տրդատ՝ ձանձրանալով Ս. Լուսաւորչի մշտամրմունջ աղօթքներէն, դիտողութիւն կ'ընէ: Սուրբը կը դադրեցնէ աղօթքը, սակայն Տրդատ կ'ըսելով տեղէն չի կրնար շարժիլ, ու քարը վար կ'իյնայ՝ կրօնակից հետք վրան: Վանայ գաւառին Ս. Աստուածածին վանքին մէջ, փորուած՝ Բարե սեղան մը կայ, ուրկէ անընդհատ իւզ մը կը կաթէ, կ'ըսեն, որ հիւանդին բժշկութիւն կուտայ: Սըվազի Ս. Խնդրահատար վանքի կուշտը պայտաւ մը կայ, Ս. Գէորգի ձիւն օսփի հետքը, որ խելագարները կը բժշկէ: Էրզրուսի Խաչկայ վանքի գերեզմանատան մէջ խոյ-Բարե կան, որոնց վրայ հիւանդները կը կարդացուին, ու . . . կ'ա-

Փենուան (Խաչափայտ, քահանայատակ) Ե Ե՛ Կտրես՝ մէջն գէտ խաչ է »: Ասիկա հանելու ատեն աղօթք կ'ընեն: Աւետարան կը կարդան: Փենուան դիւանալած զօրութիւն ունի, կ'ըսեն: Կարդացողները՝ ասկէ կտոր մը դնելով հետէ մը մէջ, կուտային հիւանդներու, Տամբողներու, ըմբիշներու, մարտիկներու եւ սիրահարներու: Համագրամին (համասփիւռ) գաղափարը կը յայտնէ Միխիթար Հերացի բժիշկը: Խնդրողներուն՝ զիշերը աւելի պայծառ կերեւայ եղեր: Արեւոյս, Արեւոյս եւ ուրիշ քանի մը բոյսեր՝ դիցարանական հետք մը կը կրեն:

դէկանան ալ: Ներերի չէ՞ խորհիլ թէ, ասոնք մեր ՊՍԱՐԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ (1) մնացորդ-

(1) Շատ լմը հրաշագործ քարեր կան: Օրոյ-որոյն վրայ կարգալ կուտան զիշերը չքնացող երախաները: Կարգալ չարածի տղաքը ասոր ոտքը կը բերեն քալելով, որ խեղճութիւնն անցնի: Երբ, մագերին կարճ աղջնակները՝ ատոր վրայ կը կարդացուին: Երբ, որուն մէջէն կ'անցնեն հիւանդկախ մանջուկները, ըսելով « Ա՛ գա կամ տո՛ւր »: Դեւոր, ասոր վրայ կը պառկեցնեն խեղճեղները, որպէս զի խելօքնան: Երբ, աս քարին քովէն վազող շուրով կը լողցնեն կամ գէթ երեսը կը լուան ան հիւանդներուն որոնց հիւանդութեան տեսակը ճանչցուած չէ: Հայերու քարապաշտութեան վրայ գրած է Ազգայնագետ:

Խաչքարերը՝ գրեթէ ամէն տեղ կը գտնուին: Ասոնք Բրիտանացիներէ շատ առաջ գոյուցուին ունէին: Կռապաշտութեան թուականին, խաչքարը՝ ուղեցոյցի տեղ կը ծառայէր: Ձորս փողոցներ իրար կտրած տեղը կը կանգնէին, ու վրան կը նշանակէին երկու աջ ու երկու ձախ փողոցներու անունները: Խաչքարը, Ձինաստանի մէջ բարձրեային պաշտամունքին նուիրուած էր: Հիւսիսային Ասիոյ ու Ամերիկայի քանի մը տեղերէն գտնուած են խաչածե մեծ քարեր, կրօնը կը պաշտուէին ատ կողմերու հին բնակիչներէն: Դիցարանական շատ մը չաստուածութիւններ՝ ատ ձեւը ունեցած են Յունաստանի մէջ, Խաչքարը, Եգիպտոսի մէջ, Ներոսի բանալին կը սեպուէր, ուստի, կը պաշտուէր՝ իբր քարերար պատճառը ատ երկրին պողպատութեան: Միքայի, այսինքն Պարսկներու Արեւ-Աստուածին քահանաները՝ իրենց ներածականերու ճակտին վրայ



ներն են. Գրեթէ բոլոր վանքերն ալ ունին կաթնաղբիւր, լուսա բիւր, դեղնաղբիւր, խաբունակն եւայլն: Մէկը՝ կիներուն ստինքի կաթը կ'աւելցնէ, միւսը աչքի ցաւ ունեցողներուն բժշկութիւն կուտայ, մէկալը՝ դեղնախտ ունեցողները կ'աղէկցնէ, մէկն ալ՝ տիկիներուն լրջութիւն կը պարզեւէ: Ասոնք ալ մեր ՋՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ (1) չեն յիշեցնէր:

աս նշանը կը դնէին, կը խաչակնքէին: Այլ եւ այլ պատճառներով, խաչի նշանին յարգանքը ընդհանուր եղած է, իբր հին հայերէն, հեթոյս, քիչ-քիչ հեթոյս, երբեք-բեք-բեք ու քիչ-քիչ հեթոյս: Աս մասին գրած է Արշակունի Յովհաննէս:

(1) Շատ տեղեր ջերմի ակեր, աղբիւրներ, լիճեր, վտակներ կան որոնց մէջ կը լողան ջերմ բուռողները, ու ... կը բժշկուին:

Աչքի, ակուայի, ականջի ցաւ ունեցողները վանքի մը կամ եկեղեցիի մը ու իրենց տունին միջեւ գտնուած գետակի մը կամուրջին վրայ կամ աղբիւրի մը գուռին առջեւ կայնելով կ'ըսեն. « Ինձմէ ա՛ռ, հողին տո՛ւր, հողէն ա՛ռ, հովին տո՛ւր, հովէն ա՛ռ, շունին տո՛ւր: Ամէն »: Ուխտատեղիներէ պատճառ հիւանդներուն ջուր տանելու սովորութիւնը, զրգթէ, ընդհանրացած է, կիներուն մէջ: Զուրը մեր եկեղեցիին մէջ ալ մուտ գտած է, հին կրօնքի ազդեցութենէն անշուշտ:

Եփրատ գետը նուիրական սեպուած է. Երբ տղայ մը հիւանդկախ անկողնի հոն կը տանին, ու երբ օր կը լողցնեն. Ատիկ վերջ տղան կը մեռնի

Վերջապէս ՎԱՐԴԱՎԱՌՆ ալ հրապաշտութեան փառաւոր տօնն է, հիմա՛ քրիստոնէացած, դոր, այսօր, սա՛ վճիտ օգին մէջ, ծաւի երկինքին տակ, անհուն բարձրութեան մը վրայ, հոգեխնձիղ ուխտաւորներու հետ. կո՛ւշտ մը կը վայելե՛մ, ա՛լ փակելով « Պատկերներ » ուս ալպօմը:

կամ կ'աղէկնայ: Մայրը, մոմեր առած ձեռքը գետին եզերքը կը պտըտի՝ ըսելով. « Եմէ՛ բուկինն է՛ քեզի, իսկ եմէ՛ իմինն է՛ լեցուր տուր »: Ետքը մոմը վանքի մը կամ եկեղեցիի մը խորանին առջեւ կը վառէ՝ սիրականին արեւուն (Յէ՛ ողջ է) կամ հողին (Յէ՛ մեռած է) համար: Ասոնք ու ասոնց պէս շատ մը սովորոյթներ ջրապաշտութենէ մնացած են բացարձակապէս:





999

1824

*[Faint, mirrored text, likely bleed-through from the reverse side of the page]*



Հայաստանի Ազգային գրադարան



NL0431193



22122